

Հաստատում եմ  
Ֆինտողիոմ ԱՆԵՍՈՂԷՅԱՆ  
Յերեվան 31 մայիսի 1933 թ.

Հաստատում եմ  
ժողանա. Հաշվառման Վարչություն  
ԱԲԵԼՅԱՆ  
Յերեվան 3 հունիսի 1933 թ.

### Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԳՅՈՒՂՀԱՐԿԻ ՅԵՎ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ-  
ԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ 1933 թ. ԿԱՄՊԱՆԻԱՆ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ


§ 1. Բնակչության, ցանքերի տարածու-  
թյունների, անասունների քանակի, հարկման  
ու պետապահովագրության վճարումները հաշ-  
վարկելու և ահնրաժեշտ այլ տեղեկությունները  
ունենալու համար, ամենուրեք կատարվում է  
տնտեսությունների հաշվառում:

Հաշվառման յենթակա յեն՝

ա. կոլեկտիվ տնտեսությունները (կոմ-  
մունաներ, արտելներ, հողը միատեղ մշակող  
ընկերություններ) .

բ. գյուղատնտեսական պարզ (հասարակ)  
միավորումները .

191  
38  
2490



գ) անհատական տնտեսություններ չունեցող կոլեկտիվ տնտեսության անդամները (կոլտնտեսականները) .

դ) անհատական տնտեսություն ունեցող կոլեկտիվ տնտեսության անդամները (կոլտնտեսականները) .

յե) աշխատավորական մենատնտեսների տնտեսությունները .

զ) կուլակային տնտեսությունները .

ը) այլ անձինք, վորոնք գյուղատնտեսությամբ չեն զբաղվում .

§ 2. Քաղաքներում և քաղաքատիպ վայրերում հաշվի չեն առնվում միայն այն տնտեսությունները, վորոնք յենթարկվում են գյուղահարկի :

Ծանոթություն. — կոլեկտիվ տնտեսությունները ցուցակագրվում են առանձին կարգով՝ Գյուղխորհուրդները այդ տնտեսությունների հաշվառում չեն կատարում :

§ 3. Հաշվառման կամպանիայի ղեկավարությունը չըջաններում գյուղահարկի կանոնադրության համաձայն գրվում և չըջանային գործադիր կոմիտեների վրա, վորոնք պարտավոր են՝

ա. տանել հաշվառման նախապատրաստական աշխատանքները, լայնորեն բացատրելով գյուղացիությանը հաշվառման խոչորագույն նպատակներն ու նշանակությունը .


բ) ապահովել գյուղխորհուրդներին հաշվառման համար անհրաժեշտ նյութերով և բլանկներով .

գ) ժամանակին նախապատրաստել նյութեր 1932 թ. աշնանացանի արդյունքների և դարձանագանի պլանի մասին ըստ առանձին կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների : Մանրագին հրահանգել գյուղխորհուրդներին հաշվառման կամպանիայի կիրառման և գյուղցուցակների առանձին սյունյակները լրացնելու կարգի մասին, ինչիես և ստուգել հաշվառման արդյունքները .

յե. կազմել հաշվառման որացուցային ծրագիր առանձին գյուղերի և շրջանի համար, նշելով յուրաքանչյուր գյուղի հաշվառման սկիզբն ու վերջը :

Հաշվառման նախապատրաստական աշխատանքները և կազմակերպումն պետք և դասավորվի այնպիսի ձևով, վորպեսզի վերջանալուց հետո անմիջապես անպայման ստուգվեն հաշվառման տվյալները և ապահովված լինի որյեկտների և յեկամուտի աղբյուրների լրիվ հայտնաբերումն :

Հաշվառման կամպանիայի ընթացքում (բացատրական աշխատանք, հրահանգում, գյուղցուցակների լրացում, հաշվառման արդյունքների ստուգում և համաթվարկումների կազմելը) չըջանային գործկոմները, մորելիզացիայի յեն յենթարկում չըջանային ապարատներին այնպիսի թվով, վորն



անհրաժեշտ է այդ կամպանիայի հաջող կիրառման համար:

Հրահանգչական աշխատանքներին և հաշվառման արդյունքներին ստուգմանը անպայման պարտադիր կարգով պետք է մասնակցեն նաև ժողովնուհաշվառման տեսուչները:

Հաշվառման համար անհրաժեշտ կադրեր պատրաստելու գործին պետք է հատկացնել առանձին ուշադրութուն:

Հաշվառման աշխատանքը պետք է հանձնարարել քաղաքականապես ստուգված ու փորձված անձանց, վորոնց կարելի չէ հավատալ և վորոնք նվիրված են սոցիալիստական շինարարության գործին:

Հաշվառում կատարող աշխատակիցներին ուշադրութունը պետք է սրել այն բանի վրա, վորպեսզի կոլտնտեսականների և մենատնտեսների բոլոր որջեկանները և յեկամուտի աղբյուրները հայտնաբերվեն ու հաշվի առնվեն լրիվ չափով:

Որյեկանները թաքցնելու և սխալ տեղեկութուններ տալու յուրաքանչյուր դեպքին պետք է մոտենալ վորպես պետությանը խափելու փաստի և մեղավորներին յենթարկել ամենախիստ պատասխանատվության:

§ 4. Հաշվառման կամպանիան գյուղում կիրառելու և հաշվառման արդյունքների ամբողջ ղեկավարութունը և պատասխանատվութունը ընկնում է այն գյուլխորհրդի վրա, վորի սահմաններում է գտնվում տվյալ գյուղը:

Գյուղխորհուրդները պետք է առաջնորդվեն շրջգործկոմների ցուցմունքներով և այն որացուցային ծրագրով, վորը սահմանված է շրջգործկոմի կողմից տվյալ գյուլխորհուրդի համար:

Շրջգործկոմներից ցուցումներ ստանալուց անմիջապես հետո, գյուլխորհուրդները կազմակերպում են գյուղական հարկային հանձնաժողովներ, իսկ վերջինները կատարում են բոլոր կոլտնտեսականների և մենատնտեսների հաշվառումը:

§ 5. Բացատրական կամպանիան տանելու ժամանակ կոլտնտեսականներին և մենատնտեսներին պետք է ծանոթացնել հաշվառման նոր առանձնահատկությունների հետ, այսինքն պարզաբանել, վոր գյուղհարկը վորոչեքու համար հաշվի յեն առնվում աչնան ցանքի փաստացի տարածությունները և 1933 թ. դարնանացանի պլանով տվյալ տնտեսության համար սահմանված դարնանացանի մշակույթների տարածությունը:

§ 6. Հողի տարածությունները (ցանք, խոտհարք, այգի և այլն) հաշվի յեն առնվում հեկտարներով: Առանձնապես յեկամտարքեր հատուկ նորմաներով հարկվող մշակույթների տարածությունները գյուղցուցակներում ցույց են տրվում տասնորդական կոտորակներով 0,01 ճշտությամբ, իսկ մնացած մշակույթները մինչև 0,1 ճշտությամբ:

§ 7. Կոլտնտեսականների և մենատնտեսների հաշվառման արդյունքները գրվում են գյուղացուցակների մեջ:

§ 8. Ցանքերի տարածության հաշվառման ավյալները գյուղացուցակների մեջ գրանցումն պետք է կատարել վոչ թե տնտեսության տիրոջ հարցաքննության հիմունքներով այլ բացառապես 1932, թվի աշնանացանի հաշվետվության նյութերով և 1933 թ. գարնանացանի պլանի հիման վրա:

Այդ նյութերի ոգտագործումն պետք է կազմակերպել հետևյալ ձևով:

ա) միենչև հաշվառումն սկսելը շրջանային ֆինրաժինները պետք է իրենց տրամադրության տակ ունենան ստուգված ավյալներ աշնանացանի ցանքի և գարնանացանի մշակույթների պլանի մասին ըստ առանձին կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների:

բ) այդ նույն ժամանակին գյուլխորհուրդները պարտավոր են ունենալ 1932 թ. աշնանացանի տարածության և 1933 թ. գարնանացանի մշակույթների չհանրայնացված ցանքերի պլանային առաջադրանքների մասին ավյալներ ըստ առանձին կոլտնտեսականների և մենատնտեսների:

գ) Թված ավյալները ցանքերի տարածության վերաբերյալ անմիջորեն գրանցվում են գյուղացուցակների համապատասխան սյունյակների մեջ:

դ) Առանձին ուշադրություն է դարձվում

այդ դեպքում ցանքերի ավյալները գյուղացուցակներում ճշտորեն գրանցելու վրա: Աշնանացանի հացահատիկի ցանքերի տարածության ավյալները պետք է համապատասխանեն այն ավյալներին, վորոնք հիմք են ընդունված պետությանը հացահատիկ հանձնելու առաջադրանքների չափը ըստ առանձին տնտեսության սահմանելու համար: Գյուղացուցակների մեջ գրվող գարնանային մշակույթների տարածությունները պետք է հավասար լինեն գարնանացանի այն պլանին, վորը տրված է ավյալ գյուղխորհուրդին և բաշխված է վերջինի կողմից առանձին մենատնտեսների և կոլտնտեսականների միջև:

Գարնանային այն մշակույթների նկատմամբ, վորոնց համար սահմանված են պետությանը հանձնելու առաջադրանքներ, գյուղացուցակներում գրվող թվերը պետք է համապատասխանեն, այն ավյալներին, վորոնք հիմք են վերցրած այդ առաջադրանքների չափը վորոշելու համար:

## ԿՈՒՏԵՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

§ 9. Կոլտնտեսականների հաշվառման ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալ կարգով:

Կոլտնտեսության մեջ մտնող յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է անպայման գրվի գյուղացուցակում անկախ այն հանգաման-

քից ունի նա չհանրայնացրած յեկամուտի աղբյուրներ, թե վոչ (ազարակային ցանք և այլն) : Գյուղացուցակներում գրվում են նաև այն կողմնառնտեսականները, վորոնք հանրայնացրել են վոչ միայն իրենց բոլոր յեկամուտի աղբյուրները այլ և բնակելի շենքերը :

Կոլտնտեսություններում աշխատող գյուղատնտեսների, ուսուցիչների, հաշվետարների տնտեսությունները հաշվի են առնվում վորպես կոլտնտեսականների տնտեսություններ, յեթե նրանք ունեն կոլտնտեսականների անդամագրույկներ : Անդամագրույկների բացակայության դեպքում այդ տնտեսությունները հաշվի են առնվում վորպես մենատնտեսություններ :

Կոլտնտեսության բացակայող անդամները (յեթե միայն նրանք հանված չեն կոլտնտեսությունից) հաշվի յեն առնվում վորպես կոլտնտեսականներ անկախ այն բանից՝ հատկացնում են նրանք իրենց վաստակի մի մասը կոլտնտեսությանը թե վոչ :

Այն մենատնտեսները, վորոնք հաշվառման պահին մտել են կոլտնտեսության մեջ, սակայն դեռ չեն ձևակերպվել ցանքի և անասունների հանրայնացումը, պետք է հաշվի առնվեն, վորպես կոլտնտեսականներ :

### ՄԵՆԱՏՆԵՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

§. 10. Գյուղացուցակներում պետք է գրվեն անխտիր բոլոր մենատնտեսները, վորոնք

գտնվում են տվյալ գյուղխորհուրդի սահմաններում (տերիտորիայում) անկախ նրանից գրառվում են գյուղատնտեսությամբ թե վոչ : Այսպիսով գյուղացուցակի մեջ պետք է գրվեն թե գյուղատնտեսություն ունեցող գյուղացի մենատնտեսները և թե բանվորների, ծառայողների, տնայնագործների տնտեսությունները, յեթե նույնիսկ այդ անձանց ընտանիքները ապրում են կողմնակի աշխատանքի միջոցներով և այլն :

Յեթե միևնույն տանը ապրում են յերկու և ավելի ընտանիքներ, վորոնք վարում են ինքնուրույն տնտեսություններ, այդ դեպքում յուրաքանչյուր ընտանիքը գյուղացուցակում գրվում է առանձին :

§ 11. Բոլոր գյուղհարկ վճարողները, հաշվի յեն առնվում այն վայրում, վորտեղ գտնվում են նրանց տնտեսությունները :

Գյուղխորհուրդի սահմաններից ժամանակավոր բացակայող քոչվոր անասնապահական տնտեսությունները հաշվի յեն առնվում իրենց հիմնական բնակավայրում, իսկ յեթե անհնարին է վորոշել նրանց մշտական բնակատեղը նրանք հաշվի յեն առնվում այնտեղ, վորտեղ գտնվում են հաշվառման պահին :

§ 12. Նախքան հաշվառում սկսելը, գյուղխորհուրդը հրավիրում է գյուղի հասարակության ընդհանուր ժողով, վորտեղ պարտավոր է՝

ա) ծանոթացնել գյուղացիներին գյուղ-  
հարկի և դրույքային ապահովագրության  
հիմնական սկզբունքների, արտոնություննե-  
րի, վճարողների ու նրանց՝ յեկամուտի աղ-  
բյուրների հաշվառման կարգի հետ, հատկա-  
պես ընդգծելով, վոր հաշվառման տվյալները  
անհրաժեշտ են վոչ միայն գյուղհարկի  
ապովճարների և ջրային տուրքը հաշվելու հա-  
մար այլ և ծառայելու յեն վիճակագրական  
նպատակներին:

բ) պարզաբանել վոր ընթացիկ տարում  
գյուղհարկի և պետապովճարների հաշվարկը  
պետք է կատարվի վոչ թե անցյալ տարիների  
որինակով, այլ 1932 թ. աշնան ցանքի փաս-  
տացի տարածության և 1933 թ. պլանով տը-  
ված դարնանացանքի համեմատ, առանձնա-  
պես շեշտելով, վոր դարնանացանի պլանից ա-  
վելի կատարած ցանքի տարածությունն ա-  
զատվում է հարկից և ապովճարներից:

գ) մանրամասն պարզաբանել—վոր յեկա-  
մուտների աղբյուրների թագցնումն (անա-  
սունների, վոչ գյուղատնտեսական յեկամուտ-  
ների թագցնումն և այլն) պետք է վորակել  
վորպես պետությանը խափելու յերեվույթ և  
վորի համար վճարողները յենթակա յեն խիստ  
պատասխանատվության, տուղանքի վարչա-  
կան կարգով, կամ դատական հետապնդման,  
ինչպես և պարզաբանել, վոր թագցնողներին  
ապահովագրական վարձատրություն չի տրվե-  
լու:

§ 13. մինչև հաշվառումը սկսելը գյուղ-  
խորհուրդները պարտավոր են կազմել բոլոր  
կոլտնտեսականների և մենատնտեսների ցու-  
ցակները, նշելով նրանցից յուրաքանչյուրի  
տնտեսությանը 1933 թ. տրված դարնանացանի  
պլանը ըստ առանձին մշակույթների դաշտում  
և ագարակային հողամասերում և 1932 թ. աշ-  
նան ցանքի փաստացի տարածությունը:

Այդ ցուցակները կազմելիս գյուղխոր-  
հուրդները պետք է ղեկավարվեն հետևյալով՝

ա) հացահատիկային և այլ մշակույթների  
տարածությունները, վորոնց նկատմամբ սահ-  
մանված են պետությանը հանձնելու պարտա-  
վորություններ գյուղցուցակների մեջ գրվում  
են անփոփոխ այն ձևով, ինչպես վոր ընդուն-  
ված են յեղել այդ պարտավորությունները  
վորոշելու ժամանակ:

Այսպես որինակ, յեթե մենատնտեսին  
տրված է ղիցուկ 12 ցենտներ հացահատիկ  
հանձնելու պարտավորություն, այդ ղեպքում  
յեյնելով յուրաքանչյուր հեկտարի համար  
սահմանված 3 ցենտներ նորմայից, հացահա-  
տիկային ցանքի տարածությունը պետք է վո-  
րոշել 4 հեկտար: Այդ տարածությունը պետք  
է նշանակել գյուղցուցակի համապատասխան  
սյունեյակում:

բ) Գարնանացանի տարածությունը, պետք  
է համապատասխանի շրջգործկոմի կողմից  
տվյալ գյուղխորհուրդի համար սահմանված  
պլանին:

Այդ ստուգելու համար տնտեսությունների ցուցակը կազմելիս, դարձանացանի և աշնանացան մշակույթները պիտի ցույց տրվեն առանձին: Ցուցակները կազմելուց հետո պետք է ընդգումարվեն բոլոր տվյալները և համեմատության դրվեն հետևյալ տվյալներին հետ՝

- 1) Գարնանացանի տարածությունը շրջագործկումի կողմից տրված պլանի հետ,
- 2) աշնանացանի տարածությունները այն տարածությունների տվյալների հետ, վորոնք հիմք են վերցված հացահատիկի պետական առաջադրանքների չափը վորոշելու համար:

Յեթե այդ համեմատությամբ ստացվի տարբերություն, ցուցակները պետք է ստուգել և մտցնել անհրաժեշտ ուղղումներ:

Գյուղխորհուրդների կազմած այդ ցուցակները հանձնվում են գյուղական հարկային հանձնաժողովին:

§ 14. Տնտեսությունների ցուցակներում նշված տվյալները ցանքերի մշակույթների մասին **անմիջորեն դրվում են գյուղացուցակների մեջ:**

Մյուս տվյալների հաշվառումը (չնչեր, խոտհարքներ, անասուններ, վոչ գյուղատնտեսական յեկամուտներ և այլն) գյուղական հարկային հանձնաժողովները կատարում են տնտեսերերի հարցաքննության միջոցով:

Այն դեպքերում, յերբ տնտեսության գարնանային ցանքի պլանային առաջադրանք-

ները սահմանված չեն ըստ առանձին մշակույթների (որինակ՝ տնտեսութայնը պլան է տրված հացահատիկ 2 հեկտար, կարտոֆիրը 0,5 հեկտար, և բացի այդ 0,5 առանց մշակույթների ստորաբաժանման ընդամենը 3,0 հեկտար) գյուղհարկային հանձնաժողովները այդ մշակույթների հաշվառումը կատարում են նույնպես տնտեսերերի հարցաքննության միջոցով:

§ 15. Հաշվառումից առաջ բոլոր տնտեսերին պետք է հայտարարվի հաշվառման մասին:

Տնտեսերը հրավրվում են խմբակներով և նրանցից յուրաքանչյուրի հարցաքննությունը կատարվում է մյուսների ներկայությամբ:

Տնտեսերը պարտավոր են ներկայանալ գյուղական հարկային հանձնաժողովին նշանակված որը, ունենալով իրենց մոտ հետևյալ փաստաթղթեր՝

ա) կարմիր բանակայինների, հաշմանդամների արտոնություններով ոգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթերը:

բ) **տնտեսության անցյալ տարվա քննաքնում ունեցած վոչ գյուղատնտեսական յեկամուտների չափի մասին փաստաթղթեր, յեթե այդպիսիք ներկայացված չեն յեղել գյուղխորհուրդին մինչև հաշվառման սկսելը:**

§ 16. Հաշվառման համար տեղեկություններ է տալիս տնտեսության գլխավորը, իսկ նրա ժամանակավոր բացակայության դեպքում

տնտեսութեան չափահաս անդամները: Անչափահաս անդամների ցուցմունքների հիման վրա գյուղացուցակի լրացնելն արգելվում է:

§ 17. Այն տնտեսութունները վորոնք ցույց են տալիս իրենց բաժանված-բաժանված են համարվում միայն այն դեպքերում, յերբ նրանք ձեվակերպված վկայականների համաձայն փաստորեն բաժան տնտեսութուն են վարում: Հակառակ դեպքում, այսինքն՝ յերբ տնտեսութունը ներկայացնում է համապատասխան ձեվակերպված վկայական բաժանման մասին, բայց փաստորեն անբաժան տնտեսութուն է կազմում—պետք է ցուցակազրվեն վոր պես մեկ տնտեսութուն:

§ 18. Տնատիրոջ հարցաքննութեան ժամանակ գյուղհարկային հանձնաժողովները պետք է ունենան իրենց ձեռքին անցյալ տարվա գյուղացուցակները, և այնտեղից տեղափոխել 1933 թ. գյուղացուցակի մեջ 1932 թ. հաշվառված Յ տարեկանից վեր կոմերի ցուլերի, և ձմեռած վոջ-խարների ու այծերի քանակը:

§ 19. Տնատիրոջ ցուցմունքների ճշտութունը համեմատվում է անցյալ տարվա տվյալների հետ, հարեվան գյուղացիների ցուցմունքների հետ և այլն:

Այն դեպքերում, յերբ գուղհարկային հանձնաժողովները կգտնեն տնատիրոջ տեղեկութունները անբավարար, անմիջապես պետք է կատարեն յեկամտի աղբյուրների փաստացի

ստուգում և թագցրած աղբյուրներ հայտնաբերելու դեպքում, պետք է կազմեն արձանագրութուն, մեղավորներին պատասխանատվութեան յենթարկելու համար:

Հաշվառման արդյունքները պետք է անպայման քննութեան առնվի գյուղի համայնքի ընդհանուր ժողովում:

§ 20. Հաշվառման աշխատանքները վերջացնելուց հետո գյուղհարկային հանձնաժողովի անդամները պետք է ստորագրեն գյուղացուցակների վերջում:

Ստուգումներից և անհրաժեշտ դեպքերում ուղղումներ մտցնելուց հետո, գյուղխորհուրդը պետք է հաստատի գյուղացուցակը իր ստորագրութեամբ և կնիքով:

#### ԳՅՈՒՂՅՈՒՅԱԿԻ ԼՐԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 21. Գյուղացուցակի սյունյակների № -ը սկսվում են 1-ից և վերջանում 122-րդ սյունյակով: 1-ին սյունյակում պետք է գրվի տնտեսութեան №-ն ըստ կարգի: Յուրաքանչյուր գյուղում տնտեսութունների համարակարգումը պետք է սկսել առաջին №-ից և վերջին №-ը պետք է հավասար լինի գյուղի տնտեսութունների ընդհանուր քանակին (նույն թվում և այդպիսի տնտեսութունների, վորոնք գյուղհարկի յենթակա յեկամուտի աղբյուրներ չունեն): Առաջին սյունյակում հայտարարով պետք է գրել նաև նույն տնտեսութեան անցյալ տարվա №-ն ըստ գյուղացուցակի:

§ 22. Տնտեսությունները գյուղական ցուցակում գրվում են հետևյալ հերթականութամբ ա) բոլոր մենատնտեսները ինչպես և այն տնտեսությունները՝ վորոնք գյուղատնտեսութամբ չեն պարապում (ուսուցիչներ, բժիշկներ, բանվորներ, արհեստավորներ և այլն), բ) բոլոր կոլտնտեսութայան անդամները, վորոնցից առաջին հերթին գվում են չհանրայնացված յեկամուտի աղբյուրներ ունեցողները, իսկ յերկրորդ հերթին՝ չհանրայնացված յեկամուտի աղբյուրներ չունեցողները: Կոլտնտեսութայան անդամներին ցուցակագրելիս անհրաժեշտ է ցույց տալ նաև այն կոլտնտեսութայան անունը վորին անդամակցում են կոլտնտեսականները:

Մենատնտեսներին գրելուց հետո պետք է ազատ թողնել 10 տող, ապա շարունակել գրել կոլտնտեսականներին, նշելով սկզբից կոլտնտեսութայան անունը:

§ 23. 2-րդ սյունյակում պետք է գրել տնտեսութայան տիրոջ լրիվ ազգանունը, անուր, հայրանունը և ազգությունը:

§ 24. 3-5-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսութայան բոլոր շնչերի թիվը հետևվյալ կարգով՝

3-րդ սյունյակում պետք է գրել բոլոր շնչերը (մշտական ապրող և բացակայող ընտանիքի անդամներին):

4-րդ սյունյակում պետք է գրել 3-րդ սյու-

նյակում մատնանշված անդամներից այնպիսիներին, վորոնք բացակայում են 3 ամսից ավելի (կարմիր բանակայիններին, ուսանողներին, աշակերտներին և այլն):

5-րդ սյունյակում պետք է գրել տնտեսությունում մշտապես ապրող ընտանիքի շնչերից միմիայն անաշխատունակ անդամներին:

Անաշխատունակ են համարվում՝ 1) բացարձակ հաշմանդամները, 2) մինչև 16 տարեկան հասակ ունեցողները 3) 60 տարեկանից վեր տղամարդիք և 55 տարեկանից վեր կանայք:


Տնտեսութայան շնչերի թվի մեջ պետք է հաշվել ընտանիքի բոլոր անդամներին, այսինքն այն բոլորին, վորոնք կապված են միմիայնց հետ ընդահանուր յեկամուտով, ընդհանուր ծախքով և գտնվում են ընտանիքի գլխավորի խնամքի տակ:

Շնչերի թվի մեջ չպետք է մտնեն մեկ տարուց ավելի ազատագրկման դատապարտվածները և այն անձինք, վորոնք կտրել են իրենց կապը տնտեսությունից, չեն մասնակցում նրա աշխատանքներին, չեն ոգնում ընտանիքին և չեն ստանում ոգնություն նրանից:

§ 25. 1933 թ. ցանքի բաժնի սյունյակները (6-ից 25-ը) պետք է լրացնել նույն սյունյակների վերանագրերի համաձայն:

§ 26 6-9-րդ սյունյակներում պետք է գրել 1933 թ. ցանքի պլանով սահմանված ամբողջ տարածությունը հետևյալ կարգով՝

191  
38  
2490



6-րդ սյունյակում պետք է գրել ծխախոտի տարածութիւնը (դեղին և դուլյասարի), 7-րդ բամբակի, ամբողջ տարածութիւնը, վորից անջրաի բամբակի տարածութիւնը պետք է ցույց տալ «Ծանոթութիւն» սյունյակում: 8 և 9 ազատ սյունյակներում պետք է գրել անբերրիութիւնից սպաճովագրվող այն մշակույթները, վորոնց համար հատուկ սյունյակներ չեն նախատեսված գյուղացուակներում (որինակ, սոյա, կենաֆ և այլն):

§ 27. 10-րդ սյունյակը հաշվառման ժամանակ չի լրացվում և չի գծվում:

§ 28. 11-12-րդ սյունյակներում պետք է գրել հացահատիկային ցանքի տարածութիւնը (ցորեն, գարի, յեգիպտացորեն, հաճար, վարսակ և այլն):

Ըստ վորում 11-րդ սյունյակում պետք է գրել հացահատիկի աչնան ցանքի փաստացի տարածութիւնը, իսկ 12-րդում գարնանացանի պլանով տվյալ տնտեսութեան համար սահմանված ցանքի տարածութիւնը:

§ 29. 13-րդ սյունյակում պետք է գրել ցանված ընդեղեն մշակույթների տարածութիւնը (լոբի, սիսեռ, վոսպ, սորգո և այլն):

Ծանոթութիւն.— Հատիկային և ընդեղենի ցանքերը, վորոնք ցանված են սիլոսի կամ, կանաչ կերի համար այդ սյունյակներում չեն գրվում:

§ 30. 14-15-րդ սյունյակներում պետք է

գրել բոլոր ցանովի խոտերի տարածութիւնը (յոնջա, կորընգան և այլն) այն է՝ 14-րդ սյունյակում, պետք է գրել նախկին տարինների ցանքով բռնված ցանովի խոտի տարածութիւնը, իսկ 15-րդ սյունյակում պետք է գրել 1933 թ. պլանով սահմանված ցանովի խոտի տարածութիւնը:

Ծանոթութիւն.— Յեթե ցանովի խոտի ցանքը կատարված է ուրիշ մշակույթների հետ խառն, այդ դեպքում ցանքի տարածութիւնը ցանովի խոտի սյունյակում չպետք է գրել, այլ պետք է գրել տվյալ մշակույթի համար հատկացված սյունյակում:

Հատիկային և ընդեղենի ցանքերի այն տարածութիւնները, վորոնք հատկացված են խոտի կամ կերի համար և հնձվում է կանաչ դրութեան մեջ, հաշվի է առվում վորպես ցանովի խոտ:

§ 31. 16-րդ «ա» սյունյակում գրվում է արեվածաղկի տարածութիւնը: Յեթե արեվածաղկի ցանքի տարածութիւնը հատկացված է սիլոսային կերի համար, այդ դեպքում արեվածաղկի ցանքը գրվում է 17-րդ սիլոսային մշակույթների սյունյակում, 16-րդ «բ» սյունյակում գրվում է կտավհատի տարածութիւնը և 16-րդ «գ» սյունյակում կանեփի տարածութիւնը:

§ 32. 18-րդ սյունյակում գրվում է սիլոսի մշակույթների այն տարածութիւնները, վո-

րոնց բերքը հատկացվում է սիրոսային կերի համար: Այն սիրոսային մշակույթները, վորոնց բերքը չի հնձվում այլ հողը վարվում է պարարտացնելու համար հաշվի չի առնվում: 18-րդ սյունյակում գրվում են կերի արմատապտուղների տարածությունները:

§ 33. 19-րդ սյունյակում պետք է գրել տնտեսության դաշտամշակության նորմաներով հարկվող ցանքի տարածությունները, այն է՝ 11-18-րդ սյունյակների տվյալների գումարները:

§ 34. 20-րդ սյունյակում պետք է գրել 19-րդ սյունյակում ցույց տրված ցանքի միայն ջրովի տարածությունը:

§ 35. 21-25-րդ սյունյակներում պետք է գրել այդ սյունյակների վերանազրեբում մատնանշված մշակույթների տեսակների տարածությունները, այն է՝ 21-ում չալթուկի տարածությունը, 22-ում կարտոֆիլի, 23-ում բանջարանոցների, 24-ում բախչանների (բոստան, ձմերուկ, սեխ) և 25-ում այլ մշակույթների (քենդիրի, ռամիի, կաուչուկաբեր, զաֆրան, շաքարի ճակնդեղ և այլն) տարածությունները:

§ 36. 26 և 27-րդ սյունյակներում պետք է գրել խաղողի այգիները հետևյալ կարգով՝ 26-րդ սյունյակում գրվում է պտղաբեր այգիների տարածությունը, իսկ 27-րդ սյունյակում գրվում է վոչ պտղաբեր այգիները (նորատունկ կամ յերիատասարգացնելու նպատակով բնից կտրված այգիները և այլն):

§ 37. 28 և 29-րդ սյունյակներում պետք է գրել պտղատու այգիները նույն կարգով, վորը սահմանված է խաղողի այգիների նկատմամբ:

Մաղողի և պտղատու այգիների տարածությունը պետք է հաշվի առնել լրիվ չափով անկախ նրանից այդ տարածությունները գտնվում է դաշտում թե ազդարակում, զբաղեցնում են նրանք ամբողջ տարածությունը թե մի մասը կամ պտղատու ծառերը տնկված են խիտ թե նոսր:

§ 38. 30-րդ սյունյակում պետք է գրել թթենու, տնկարանները:

§ 39. 31-րդ սյունյակը հաշվառման ժամանակ չի լրացվում և չի գծվում:

§ 40 32-րդ սյունյակում պետք է գրել տնտեսության մեջ մշտապես վորպես խոտհարք ոգտագործվող տարածությունը:

Հողի այն տարածությունը վորը ծածկված է թփուտներով կամ անտառով և ոգտագործվում է իբրև խոտհարքը, հաշվի չե առնվում վոչ թե լրիվ չափով, այլ հաշվի առնվում փաստորեն հնձվող տարածությունը:

Մարգագետինների այն տարածությունը վորոնք հատկացված են լավ խոտհարք ստանալու համար հաշվում են իբրև խոտհարքներ:

§ 41. 33 և 34-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսությանը պատկանող բոլոր փեթակների քանակը այդ սյունյակների վերնագրերի համեմատ:

§ 42. 35-37-րդ սյունյակները հաշվառման ժամանակ չեն լրացվում և չեն դժվում:

§ 43. Անասնապահութայն- համար հատկացված սյունյակում պետք է գրել կոլտնտեսականների և մենատնտեսների բոլոր անասունները: ժամանակավոր բացակայող անասունները (դրսի աշխատանքում գտնվող, ամսուային արոտավայրերի քչված) նույնպես հաշվի չեն առնվում և գրվում գյուղ ցուցակում:

Յեթե կոլտնտեսականի և մենատնտեսի մոտ գտնվում են զանազան կազմակերպությունների (խորհրդատեսության, կոլտնտեսության, մթերող մարմինների և այլն) կողմից տրված և անասուններ ժամանակավոր սրահելու կամ կերակրելու համար, այդպիսի անասունները հաշվի չեն առնվում առանձին և գրվում է «ծանոթություն» սյունյակում-ըստ վորում ցույց են տրվում՝ ինչ անասուններ է տրված և պահ (յեղենը, կովեր, ձիեր, և այլն) և կազմակերպության անունը: Ընդհանուր տեղեկանք կազմելու ժամանակ այդ անասունները չեն միացվում կոլտնտեսականների և մենատնտեսների անասունների թվի հետ:

§ 44. 38-42-րդ սյունյակներում պետք է գրել ձիերի և ջորիների քանակը ըստ այդ սյունյակների վերանագրերի:

Մանրոքոքյուն.— Բանող ձիեր պետք է հաշվել այնպիսիներին, վորոնք յերբե-

վիցե ոգտագործվել են դաշտային կամ փոխադրական աշխատանքներում:

43-52-րդ սյունյակներում պետք է գրել խոշոր յեղջուրավոր անասունների քանակը այդ սյունյակների վերնագրերի համաձայն:

§ 45. 53-րդ սյունյակում պետք է գրել անցյալ տարվա գյուղ ցուցակի ցույների, յերինջների և կովերի ընդհանուր քանակը, վորը պետք է վերցնել 1932 թ. ցուցակի 77 և 78-րդ սյունյակներին:

§ 46. 54-55-րդ սյունյակները պետք է լրացնել հետևյալ կարգով՝ 54-րդ սյունյակը լրացնելու համար պետք է վերցնել այս տարվա գյուղցուցակի 50 և 52-րդ սյունյակների տրվյալները և համեմատել 53-րդ սյունյակի քանակի հետ: Յեթե պարզվի, վոր այս տարվա հաշվառածը պակաս է կամ անփոփոխ է մընում անցյալ տարվա համեմատությամբ, 54-րդ սյունյակում պետք է գրել 50 և 52-րդ սյունյակների քանակը (իբրև հարկվող):

Իսկ յեթե պարզվի, վոր 50 և 52-րդ սունյակների քանակը ավելի է 53-րդ սյունյակի քանակին, տարբերությունը պետք է գրել 55-րդ սյունյակում վորպես ազատվող ավելցուկ, իսկ 54-րդում այդ դեպքում պետք է գրել անցյալ տարվա քանակը:

§ 47. 56-65-րդ սյունյակում պետք է գրել գոմեշների և մատակների քանակը ըստ այդ սյունյակների վերնագրերի (ստորաբաժանելով ըստ հասակների): 66-րդ սյունյակում պետք է

դրել անցյալ տարվա ցուլերի, յերինջների և մատակների քանակը, վորը պետք է վերցնել անցյալ տարվա գյուղացուցակի 89 և 90-րդ սյունյակներին:

§ 48. 67 և 68-րդ սյունյակները պետք է լրացնել հետևյալ կերպով՝

67-րդ սյունյակը լրացնելու համար պետք է հաշվել այս տարվա գյուղացուցակի 63 և 65-րդ սյունյակների տվյալները և համեմատել 66-րդ սյունյակի քանակի հետ: Յեթե պարզվի վոր այս տարվա հաշվառածը պակաս է կամ անփոփոխ է մնում անցյալ տարվա համեմատությամբ, ապա 67-րդ սյունյակում պետք է գրել 63-րդ և 65-րդ սյունյակների քանակը իբրև հարկվող:

Իսկ յեթե պարզվի վոր 63 և 65-րդ սյունյակների քանակը ավելի է 66-րդ սյունյակի քանակից, տարբերությունը պետք է գրել 68-րդ սյունյակում վորպես ազատվող ավելցուկ, իսկ 67-րդում պետք է գրել անցյալ տարվա քանակը:

§ 49. 69-րդ սյունյակում պետք է գրել 1932 թ. հաշվառած վոչխարների և այծերի քանակը, այսինքն փոխադրել անցյալ տարվա գյուղացուցակի 102 և 103 սյունյակների տվյալները:

§ 50. 70-77-րդ սյունյակներում պետք է գրել վոչխարների և այծերի քանակը հետվյալ կարգով՝

70-րդ սյունյակում այս տարվա ծնված գառների 71-րդ սյունյակում այս տարվա ծնված ուլերի, իսկ 72-րդ սյունյակում ձմեռած վոչխարների ընդհանուր քանակը:

73-րդ սյունյակում պետք է գրել 72-րդ սյունյակի հաշվառված քանակից միայն եզ-վոչխարներին.

74-րդ սյունյակում պետք է գրել ձմեռած այծերի ընդհանուր քանակը:

75-րդ սյունյակում պետք է գրել 74-րդ սյունյակի հաշվառած քանակի եզ այծերը:

76-րդ սյունյակում պետք է գրել ձմեռած վոչխարների և այծերի հարկվող քանակը մեկ թվով: Այդ սյունյակը լրացնելու համար պետք է վերցնել 72 և 74-րդ սյունյակների գումարը և համեմատել 69-րդ սյունյակի քանակի հետ: Յեթե պարզվի վոր այս տարվա հաշվառածը պակաս է կամ անփոփոխ է մնում անցյալ տարվա համեմատությամբ, ապա 76-րդ սյունյակում պետք է գրել 72 և 74-րդ սյունյակների քանակը իբրև հարկվող:

Իսկ յեթե պարզի վոր 72 և 74-րդ սյունյակների քանակը ավելի է 69-րդ սյունյակի քանակից տարբերությունը պետք է գրել 77-րդ սյունյակում վորպես ազատվող ավելցուկ, իսկ 76-րդում անցյալ տարվա քանակը:

Ծանոթություն 1. — Ձմեռած վոչխարներ և այծեր պետք է համարել այնպիսիներին, վորոնք ծնվել են մինչև 1933 թ. հունվարի 1-ը.

Ծանոթութիւն 2.— Կոլտնտեսականների չհանրայնացված անասունները հաշվի չեն առնվում նույն կարգով ինչպես մենատնտեսներինը, սակայն գյուղացուցակի 69, 76 և 77-րդ սյունյակները չեն լրացվում:

§ 51. 78-81-րդ սյունյակներում պետք է գրել ուղտերն ըստ նրանց հասակի այդ սյունյակների վերնագրերի համեմատ:

§ 52. 82-85-րդ սյունյակներում պետք է գրել եջերի քանակը ըստ նրանց հասակի այդ սյունյակների վերնագրերի համեմատ:

§ 53. 86-89-որդ սյունյակներում պետք է գրել խոզերի քանակը ըստ նրանց հասակի այդ սյունյակների վերնագրերի համեմատ:

§ 54. 90-ից մինչև 122-րդ սյունյակները հաշվառման ժամանակ չեն լրացվում և չեն գծվում:

Շուկայում գոյացող գներով գյուղատնտեսական մթերքները վաճառելուց ստացած յեկամուտները վորոշելու կարգը:

§ 55. Շուկայում գոյացող գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց ստացված յեկամուտները հաշվի չեն առնվում հատուկ ցուցակով:

§ 56. Մենատնտեսների այդ յեկամուտները վորոշվում են 1932 թ. հաշվառման պահից սկսած մինչև 1933 թ. հաշվառում կատարելու որը ստացած գումարի չափով:

Կոլտնտեսականների տնտեսություններում այդ յեկամուտները հաշվառման յենթակա չեն:

§ 57. Երջանային հարկահանձնաժողովներին իրավունք է վերապահվում ազատել հարկից սակավազոր տնտեսությունների այդ յեկամուտները, ինչպես և այն մենատնտեսների նույն յեկամուտները, վորոնց գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը յեզակի բընույթ է կրել և յեկամտի գումարը յեզել է աննշան (75-100 ո.), սակայն այդպիսի յեկամուտները անպայման պետք է հաշվի առնըվեն և գըրվեն ցուցակներում:

§ 58. Այդ յեկամուտները վորոշելու ժամանակ պետք է հաշվի առնել վոչ թե վաճառված մթերքի ամբողջ արժեքը այլ այն տարբերությունը, վորը ստացել է մթերման և շուկայի գների միջև:

Որինակ՝ Տնտեսությունը վաճառել է շուկայում գոյացած գներով միս, կաթնամթերքներ, թռչուն, բանջարեղեն և այնլ 600 ո. արժողությամբ: Մթերման գներով գրանց արժեքը կազմում է 200 ո.:

Այս դեպքում շուկայում գոյացած գներով մթերքներից ստացած յեկամուտը պետք է հաշվել 400 ո.:

§ 59. Այդ յեկամուտները վորոշելու ժամանակ հաշվի չեն առնվում բոլոր տեսակի անասունների վաճառքից ստացած յեկամուտները (նույն թվում և յերիտասարդ անասունների):

Յեթե տնտեսությունը բարձր գներով վաճառել է իր անասունը, փոխարնիելու նպատակով, այդ յեկամուտը հաշվառման յենթակա չէ: Որինակ՝ տնտեսությունը վաճառել է իր մեծացած կովը և նրա փոխարեն գներ է յերիտասարդ կով: Այդ գործարքը չպետք է հաշվի առնել:

§ 60. Ծուկայում գոյացած մթերքների վաճառքից ստացված յեկամուտի չափը վորոչում է գյուղհարկային հանձնաժողովը: Այդ յեկամուտները հաշվելու և արձանագրելու նպատակով, գյուղհարկահանձնաժողովները լրացնում են դրա համար սահմանված ցուցակը հետևյալ կարգով՝

ա) ցուցակի վերնադրում պետք է գրել գյուղի և շրջանի անունները:

բ) 2-րդ սյունյակում պետք է անալոյման գրել տնտեսության №-ը ըստ գյուղացուցակի:

գ) 3-րդ սյունյակում պետք է գրել տրնտեսատիրոջ լրիվ ազգանուն, անուն և հայրանունը:

դ) 4-րդ սյունյակում պետք է գրել մթերքների անունները, վորոնք վաճառված են շուկայում գոյացող գներով:

յե) 5-րդ սյունյակում պետք է գրել շուկայում գոյացող գներով վաճառված գյուղատրնտեսական մթերքների քանակը (մթերքների քանակը պետք է ցույց տալ կիլոներով, կամ այլ չափի միավորներով):

զ) 6-րդ սյունյակում պետք է գրել գյուղական հարկահանձնաժողովի կողմից վորոչված յեկամուտի գումարը:

ը) 7-րդ սյունյակը շուկայի մթերքների վաճառքից ստացած յեկամուտը վորոչելու ժամանակ չի լրացվում և չի գծվում:

Այդ սյունյակում գրվում է այն գումարը, վորը հաստաված է շրջանային հարկային հանձնաժողովի կողմից:

թ) 8-րդ սյունյակում պետք է գրել զանազան լրացուցիչ տեղեկություններ տնտեսության վերաբերյալ:

§ 61. Ծուկայում գոյացող գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց յեկամուտներ ստացած տնտեսությունների ցուցակը կազմելու և այդ յեկամուտների գումարը վորոչելու աշխատանքներին, գյուղհարկ հանձնաժողովներն անալոյման պետք է մասնակից անեն գյուղի կոլանտեսականներին, լայն հասարակայնությանը և ամբողջ ախրիվին:

§ 62. Գյուղհարկային հանձնաժողովների կողմից վերահիշյալ կարգով կազմված ցուցակները ստորագրվում են և ներկայացվում են գյուղացուցակի հետ միասին շրջգործկոմիտեին:

ՎՈՉ- ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏ-  
ՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 63. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտները հաշվի յեն առնվում 1932 թ. հունվարի 1-ից

մինչև գեկտեմբերի 31-ը ժամանակամիջոցում ստացված գումարների չափով:

§ 64. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտները յուրաքանչյուր տնտեսության համար վորոշում են գյուղական հարկային հանձնաժողովները:

Վորոշված այդ յեկամուտներից հանվում են բոլոր հիմնական արտադրական ծախքերը այն ե՛ հումք, կիսաֆարրիկատների և վառելանյութերի արժեքը, բանվորների աշխատավարձը ձեռնարկության համար չենք, անասուններ, արտադրական կահավորում վարձելու կամ ձեռնարկության մեջ աշխատող անասունների կեր գնելու ծախքը և վճարված արհեստագործական հարկի գումարը:

§ 65. Գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում գյուղհարկի յենթակա յեն՝

- ա) տնայնագործական և արհեստավորական զբաղմունքներից ստացած յեկամուտները:
- բ) այլ վոչ վարձու զբաղմունքներից ստացած յեկամուտները:

§ 66. Վարձու զբաղմունքներից ստացած յեկամուտները գյուղհարկի յենթակա չեն և հաշվի չպետք ե առնվեն այլ համապատասխան դեպքերում հարկվում են յեկամտային հարկով:

§ 67. Վոչ գյուղատնտեսական զբաղմունքների յեկամուտներ պետք ե համարել բոլոր տեսակի ձեռնարկություններից ստացած յե-

կամուտները, անկախ նրանից հատուկ սարքավորված չենքումն ե կիրառվում զբաղմունքը, թե բնակելի տան մեջ: Այդկարգով ու ձեվով պետք ե հաշվել նաև այլ վոչ-գյուղատնտեսական յեկամուտները, ինչպես որինակ՝ փոխադրական արհեստները, տնայնագործությունները, ազատ պրոուեսիաներ (նկարիչ, յերաժիշտ. և այլն) չենքերի վարձը և այլն:

§ 68. Կոլտնտեսականների վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամուտները յենթակա յեն հաշվառման և հարկման անկախ նրանից ունեն կոլտնտեսականները չհանրայնացված գյուղատնտեսական յեկամուտներ թե վոչ:

§ 69. Կոպերացված տնայնագործների և արհեստավորների այն յեկամուտները, վորոնք ստացվում են արտելին հանձնած արտադրանքի համար գյուղհարկի յենթակա չեն, այլ հարկվում են համապատասխան դեպքերում յեկամտահարկով աշխատավարձի հարկման համար սահմանված հիմունքներով: Իսկ շուկայում վաճառված արտադրանքի յեկամուտը յենթարկվում ե գյուղհարկի ընդհանուր կարգով:

§ 70. Վոչ-գյուղատնտեսական ազբյուրների կորցնելն 1933 թ. հաշվառման պահին, հիմք չի կարող ծառայել այդ յեկամուտները հարկման չ՝ յենթարկելու համար:

Միայն առանձին դեպքերում գյուղակ յն հարկային հանձնաժողովները իրավունք ունեն

լրիվ կամ մասնակի չափով ազատել այդ յեկամուտները, նկատի ունենալով տնտեսութեան ունակութեանը, յեկամուտի կորցնելու ժամանակը և այլն:

§ 71. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտներն արդ ընդ տնտեսութեանները (նույն թիվում և կորսնտեսութեան անդամները) ցուցակազրկում են առանձին արձանագրութեանցուցակում:

Այդ արձանագրութեանցուցակը գյուղ-հարկհանձնաժողովը լրացնում է հետևյալ կարգով՝

ա) 1-ին սյունյակում ցույց է տրվում համարներն ըստ կարգի.

բ) 2-րդ սյունյակում տնտեսութեան №-ն ըստ գյուղացուցակի.

գ) 4-րդ սյունյակում գրվում է վոչ-գյուղատնտեսական զբաղմունքի մանրամասն անվանումն (հյուսն-գարբին, ջրաղաց և այլն):

յե) 5-րդ սյունյակում պետք է գրել ձեռնարկութեան մեջ աշխատողների թիվը (վարձու բանվորների և ընտանիքի անդամների թիվը):

6-րդում պետք է գրել ձեռնարկութեան մեջ վորքան որամարդ է՝ աշխատել (բանի մարդ, բանի որ է աշխատել մեկ թիվով):

7-րդում պետք է գրել ձեռնարկութեան աշխատած բոլոր որերի թիվը:

8-րդում պետք է գրել ձեռնարկութեան

կամ աշխատանքից ստացած ամբողջ յեկամուտի գումարը, առանց ծախքերը հանելու:

9-րդում պետք է գրել ձեռնարկութեան ծախսերի անվանումները (հումք, վառելիք, բանվորների վարձ և այլն):

10-րդում պետք է գրել արտադրական ծախսերի գումարները.

11-րդում պետք է գրել ձեռնարկութեան յեկամուտի գումարը ծախքերը դուրս գալուց հետո (8-10):

12-րդ սյունյակը հաշվառման ժամանակ չի լրացվում և չի գծվում:

§ 72. Գյուղական հարկային հանձնաժողովները վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամուտները վորոշելուց հետո, լրացված արձանագրութեանցուցակը գյուղացուցակի շուկայում գոյացած գներով միջերգների վաճառքից յեկամուտ ունեցող տնտեսութեանների ցուցակի հետ միասին, ներկայացնում են շրջգործկոմներին հաստատելու և հարկելու համար:

§ 73. Յեթե մենատնտեսը չունի գյուղհարկի յենթակա յեկամուտի աղբյուրներ, գյուղ-հարկային հանձնաժողովը պարտավոր է հարցաքննել անատիրոջը պարգելու, թե ինչպիսի յեկամուտներ ունի տվյալ տնտեսութեանը աշխատավարձից, արհեստից կամ անայնազործութեանից և անաշխատ աղբյուրներից: Պարզվելուց հետո յեկամուտի չափը չի վո-

բողջում ալլ գրվում է միայն աղբյուրի առկայութիւնը (անունը) :

Այս պահանջը վերաբերվում է բոլոր այն տնտեսութիւններին, վորոնք չունեն գյուղհարկի յենթակա յեկամուտներ, այն է՝

1. Բանվորների և ծառայողների տնտեսութիւններին, վորոնք վարում են գյուղական տնտեսութիւն մերձ ագարակային հողերում, ունեն վոչ ավելի քան մեկ կով, մանր անասուն և խոտհարք բաց չունեն դաշտային հող և բանող անասուն, և աշխատավարձը համարվում է նրանց յեկամուտի հիմնական աղբյուրը :

2. Վորոնք բոլորովին չունեն գյուղատնտեսութիւն :

3. Ալլ տնտեսութիւններ, վորոնց հարկվող յեկամուտը գյուղատնտեսութիւնից չի գերազանցում 50 ռուբլուց կամ թե վորոնք ունեն միայն մեկ խոշոր յեղջուրավոր անասուն :

Վոչ գյուղատնտեսական յեկամուտների աղբյուրների առկայութիւնը պարզելուց հետո, գյուղական հարկային հանձնաժողովը գյուղ ցուցակի «վոչ գյուղատնտեսական յեկամուտի անունը» սյունյակում նշանակում է յեկամուտի տեսակը «աշխատավարձ» տնայնագործ «անաշխատ յեկամուտ» : Առանց նշելու յեկամուտի չափը :

§ 74. Գյուղի բոլոր տնտեսութիւնները գյուղացուցակում հաշվառելուց հետո, գյուղհարկային հանձնաժողովը պարտավոր է ման-

րազննին ստուգել հաշվառման ճշտութիւնը : Այդ ստուգումը պետք է կատարել գյուղ ախտի վի, կուսակցական և կոմյերիտական կազմակերպութիւնների անմիջական մասնակցութեամբ : Ստուգումը պետք է պարզի, թե արդե՞րք հաշվառումից դուրս մնացել են տնտեսութիւններ, անասուններ, վոչ գյուղատնտեսական յեկամուտներ, ճիշտ է հաշվառված ցանքերի տարածութիւնը և այլն : Ստուգելու համար գյուղխորհուրդը հաշվառման տվյալները համեմատութեան մեջ է դնում 1) գյուղխորհուրդի կողմից կազմած գարնանացանի պլանի, 2) հացահատիկային և ուրիշ մշակույթների տարածութիւնների հետ, վորոնց հիման վրա վորոշված է տնտեսութեան կողմից պետութեանը հանձնվելիք հացահատիկի, կարտոֆիլի և այլի պարտավորութիւնը :

3) կովերի և վոչխարների քանակի, վորոնց հիման վրա վորոշված է պետութեան կաթ և բուրթ հանձնելու պարտավորութիւնը և 4) 1932 թ. հաշվառման տվյալների հետ :

§ 75. Կոլտնտեսականների տվյալները պետք է համեմատել կոլտնտեսութեան վարչութիւնում յեղած տնտեսութիւնների ցուցակի հետ, նրա համար վորպեսզի կոլտնտեսականների հաշվառած տնտեսութիւնների քանակը համապատասխանի վարչութիւնում յեղած տվյալներին :

Հաշվառման տվյալների մեջ սխալներ հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է մտցնել

43. 903

ուղղումներ, իսկ կարիք չեղած դեպքում նաև նորից վերահաշվառում կատարել:

§ 76. Շրջանային գործադիր կոմիտեն նախաճանգի տեղափոխման հաշվարկման աշխատանքներին անցնելը, նույնպես պետք է ստուգի հաշվաճան տվյալների ճշտութունը, համեմատության դնելով անցյալ տարվա տվյալների և ուրիշ նյութերի հետ, վորոնք կ'լինեն շրջանի դանազան կազմակերպություններում:

Առանձնապես գյուղացուցակի ցանքերին հատկացված սյունյակների տվյալները պետք է համեմատության դնել հողրաժնի դարնանացանի պլանի և աշնանացանի փաստացի ցանքերի տվյալների հետ ըստ գյուղերի:

Բոլոր դեպքերում գյուղացուցակներում սխալներ հայտնաբերելիս անհրաժեշտ է կատարել ուղղում: Գյուղի կոնտրոլ նյութերի և հաշվառման տվյալների մեջ տարբերություններ ստանալու դեպքում տվյալ գյուղում պետք է կատարել վերահաշվառում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0229033

368  
2-99

ՊԵՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 1390

Գրավիտ 4301 (Բ)

Տիրամ 1200